https://doi.org/10.46991/hc.2022.18.2.117

Nerses Ashtaraketsi – Mikhail Vorontsov: New Documents about Friendship *

Haykaz Hovhannisyan
https://orcid.org/0000-0001-5709-5248
PhD, Professor at the Chair of Armenian History of YSU
haykaz.hovhannisyan@ysu.am

Karen Bayramyan
https://orcid.org/0000-0002-7876-8605
Ministry of ESCS, department head
bayramyan_karen@mail.ru

Key words: Nerses Ashtaraketsi, Catholicos of All Armenians, Mikhail Vorontsov, governor of the Caucasus, Matenadaran, Al. Yeritsyan, correspondence, Russian politics, pro-Armenian position, analysis.

In Armenian historiography, there are not so many references to the friendly relations of the Catholicos of all Armenians, Nerses Ashtaraketsi with the governor of the Caucasus, Mikhail Vorontsov. It is an obvious fact that these relations, in addition to personal ones, had a pronounced pro-Armenian orientation. Moreover, the preserved documents in the archive of the famous historian and specialist in Caucasian Studies Alexander Yeritsyan, which are kept in the Matenadaran named after Mesrop Mashtots, give us the opportunity to reveal and analyze many episodes of this friendship, which undoubtedly has historical and historiographical significance. On the other side, the presented documents describe Nerses Ashtaraketsi as a statesman, his intention to use his personal ties to serve the interests of the Armenian nation.

Ներսես Աշտարակեցի-Միխայիլ Վորոնցով. նոր վավերագրեր հաստատված բարեկամությունից

Հայկազ Հովհաննիսյան
պ.գ.դ., ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

Կարեն Բայրամյան
ԿԳՄՍ նախարարություն, վարչության պետ

* Տպագրվում է ՀՀ ԿԳՄՍՆ գիտկոմի 21T-6A114 թեմատիկ ֆինանսավորման դրամաշնորհի շրջանակում:

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-2(18), 2022, pp. 117-124
Received: 13.09.2022
Revised: 11.10.2022
Accepted: 25.12.2022

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2022

Nerses Ashtaraketsi – Mikhail Vorontsov: New Documents from Created Friendship
Ներսես Աշտարակեցի-Միխայիլ Վորոնցով. նոր վավերագրեր հաստատված բարեկամությունից

Հիմնաբառեր՝ Ներսես Աշտարակեցի, Ամենայն հայոց կաթողիկոս, Միխայիլ Վորոնցով, Կովկասի փոխարքա, Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, նամակագրություն, ռուսական քաղաքականություն, հայանպաստ դիրքորոշում, վերլուծություն:

Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու ու Կովկասի փոխարքա Միխայիլ Վորոնցովի բարեկամական հարաբերությունների մասին մեզանում թռուցիկ հիշատակություններ կան: Իսկ, որ այդ հարաբերությունները, բացի անձնականից, ունեցել են ընդգծված հայանպաստ ուղղվածություն, ակնհայտ իրողություն է: Ավելին՝ Մաշտոցյան Մատենադարանում Ա. Երիցյանի արխիվում պահպանված վավերագրերը հնարավորություն են տալիս բացահայտելու ու վերլուծելու այդ բարեկամության շատ դրվագներ, որոնք անշուշտ, պատմագիտական և աղբյուրագիտական նշանակություն ունեն: Մյուս կողմից, ներկայացվող վավերագրերը մեկ անգամ ևս հաստատում են Ներսես Աշտարակեցու՝ որպես պետական գործչի իրողությունը, իր անձնական կապերը հայ ժողովրդին շահերին ծառայեցնելու նպատակադրությունը:

Нерсес Аштаракеци – Михаил Воронцов: новые документы о дружбе

Айказ Оганесян
доктор исторических наук, профессор кафедры истории Армении ЕГУ

Карен Байрамян
Министерство ОНКС, начальник управления

Ключевые слова: Нерсес Аштаракеци, Католикос Всех Армян, Михаил Воронцов, наместник Кавказа, Матенадаран, Архив Ал. Ерицяна, переписка, российская политика, проармянская позиция, анализ.

В армянской историографии не так много упоминаний о дружеских отношениях католикоса всех армян Нерсеса Аштаракеци с наместником Кавказа Михаилом Воронцовым. Очевидным фактом является то, что эти отношения, помимо личных, имели ярко выраженную проармянскую направленность. Более того, сохранившиеся документы в архиве известного историка и кавказоведа Александра Ерицяна в Матенадаране имени Месропа Маштоца дают нам возможность раскрыть и проанализировать многие эпизоды этой дружбы, которые, несомненно, имеют историческое и источниковедческое значение. С другой стороны, представленные документы характеризуют Нерсеса Аштаракеци как государственного деятеля, его намерение использовать свои личные связи для служения интересам армянского народа.

* * *

Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու և Կովկասի փոխարքա, կառավարչապետ Միխայիլ Վորոնցովի բարեկամական հարաբերությունների մեկնակետը համընկավ նրանց երկուսի կարգավիճակի կտրուկ փոփոխության հետ. 1843թ Ներսես Աշտարակեցին ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս, փոքր անց, 1845 թ. գեներալ Միխայիլ Վորոնցովը հաստատվեց Կովկասի փոխարքայի պաշտոնում: Ներսես Աշտարակեցին առաջիններից մեկն էր, որ շնորհավորեց Միխայիլ Վորոնցովին՝ Կովկասի փոխարքայի և բանակի գլխավոր հրամանատար «կարգվելու» առթիվ. Ալ. Երիցյանի արխիվում պահվող վավերագիրն այդ մասին հաստատում է.«Սրբազնագույն կոմս, տեղեկանալով Բարեշնորհ Ինքնակալի կողմից Ձեզ Կովկասյան կորպուսի հրամանատար և փոխարքա նշանակելու մասին, ամենից առաջ շնորհապարտ եմ Տիրակալ Աստծուն… Ես լիովին համոզված եմ, որ Ձեր ենթակայությամբ ողջ Կովկասն ու ժողովուրդը շուտով մեծ թեթևություն կզգան մինչ այդ եղած ճնշումներից և ընդմիշտ կբարելավեն իրենց բարեկեցությունը… 17 հունվարի 1845 թ.» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 391, թերթ 1) : Ասվածին մեկ հավելում միայն. ինչպես նկատում ենք, Ներսես Աշտարակեցին ուշագրավ հորդոր և սպասում է ակնկալում նոր կառավարչապետից՝ «Կովկասն ու ժողովուրդը մեծ թեթևություն կզգան մինչ այդ եղած ճնշումներից», պարզից էլ պարզ է, որ ակնհայտ դժգոհություն է հայտնում նախորդ կառավարչապետերից, առավել ևս իր ախոյան գեներալ Իվան Պասկևիչից:

Հարկ է նշել, որ Վորոնցովը բավականին ուշադիր և հարգալից է եղել Ներսես Աշտարակեցու հետ հարաբերություններում և նամակով ափսոսանքով գրել է հայոց հայրապետի օծման արարողությանը իր մասնակցության անհնարինության մասին: Կառավարչապետը գրել էր նաև, որ նամակը «Ձեզ կհանձնի Վրաց-Իմերեթական նահանգի նահանգապետ, գեներալ-մայոր Ժերեբցովը... Հոգեպես ափսոսում եմ, որ ռազմական հանգամանքները ստիպում են մասնակցել ռազմարշավին, որն ինձ զրկեց մեծ հանդիսության ականատեսը լինելու երջանկությունից (խոսքը իմամ Շամիլի գլխավորությամբ լեռնականների դեմ ծավալված պատերազմական գործողությունների մասին է, որոնք իսկապես դժվարին դրության մեջ էին դրել ռուսական զորքերին Կովկասյան լեռներում՝ Հ.Հ.) … սակայն սիրով միանում եմ Ամենակարողին ուղղված բազմաթիվ և հազարավոր աղոթքներին՝ շնորհելու վեհափառին առողջություն հանուն հայոց եկեղեցու և հայ ժողովրդի փառքի և բարեծնության և ինձ վստահված երկրամասի: 5 հունիսի 1846թ.»,- ասվում էր Կովկասի կառավարչապետի ուղերձում (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 393, թերթ 1): Պաշտոնական այս ուղերձով սակայն չէր բավականացել Կովկասի կառավարչապետը. նույն օրը՝ հունիսի 5-ին նա Ներսես Աշտարակեցուն էր ուղղել նամակ, որում մասնավորապես ասվում էր. «Թույլ տվեք, սիրելի արքեպիսկոպոս կրկին անգամ իմ համարզի և գնդապետ Մինխվիցի միջոցով հաղորդել Ձեզ իմ ափսոսանքը՝ անձամբ ներկա գտնվել հանդիսությանը և առաջինների թվում, որոնք երջանկություն կունենան Վեհափառին հաղորդել իրենց շնորհավորանքները»,- նշել էր Միխայիլ Վորոնցովը (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 394, թերթ 1):

Առաջ ընկնելով նկատենք, որ նախորդ փոխարքաների համեմատությամբ, Միխայիլ Վորոնցովն իրապես փորձել է «ուշադիր լինել» հայության առջև ծառացած խնդիրների հարցում: Բնականաբար, շատ դեպքերում՝ կառավարչապետին այդ խնդիրների հուշողն ու առաջադրողը Ներսես Աշտարակեցին էր: Իր հերթին, Կովկասի կառավարչապետը

գիտակցում և համոզված էր, որ հայ ժողովրդի հմտությունների ու առանձաշնորհների օգտագործումը առաջին հերթին ձեռնտու է կայսրությանը՝ տարածաշրջանում տնտեսական առաջընթաց ապահովելու համար: Ինչպես հաստատում է արխիվային հերթական վավերագիրը, խոսքն առևտրի բնագավառում հայերի ունեցած առանձնաշնորհի մասին է: Ուստի հաշվի առնելով դպրոցաշինության բնագավառում Ներսես Աշտարակեցու արդեն կայացած փորձառությունը, Կովկասի փոխարքան առանձին նամակով տեղեկացնում է առևտրական դպրոցի բացման իր մտադրության մասին՝ ակնկալելով, իհարկե, հայոց հայրապետից օգտակար խորհուրդներ այդ խնդրում: Միխայիլ Վորոնցովը Ներսես Աշտարակեցու մոտ է ուղարկում իր խորհրդական Ա. Գագեմայստերին (վերջինս հայտնի է նաև Կովկասին նվիրված իր աշխատությունով (*Гагемайстер А.*, *Закавказские очерки, СПб, 1845 - Հ.Հ.)* առևտրական դպրոցի վերաբերյալ խորհուրդների համար, միաժամանակ նշելով, որ դպրոցն իր հերթին օգտակար կլինի նաև հայության համար.«Մենք նրա հետ խոսել ենք այս երկրամասում առևտրական ուսումնարանի անհրաժեշտության մասին, բայց քանի որ այն օգտակար կլինի հայերի համար, -ասվում էր կառավարչապետի 1846 թ. հունվարի 16-ի նամակում: ...օգտակար է լսել Ձեր կարծիքը, որը մեզ համար թանկ է... Ձեր համագործակցությունը խիստ անհրաժեշտ է, ուստի թույլ տվեք նրան բացատրել որոշ մանրամասներ և նկատառումներ այդ գործի մասին... Ինձ մեծ շնորհ կանեք, եթե նրա հետ կիսվեք Ձեր խորհուրդներով և առաջարկներով... Ձեզ նվիրված Մ. Վորոնոցով» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 392, թերթ 1): Հայոց հայրապետին ուղղված հաջորդ նամակում ևս կառավարչապետ Վորոնցովը խնդրանք ուներ, սակայն մինչ խնդրին անցնելը, նկատենք, որ նամակն ուշագրավ սկիզբ ունի. «Իմ առաջին պարտքն եմ համարում սրտանց շնորհապարտ լինել Ձեզ իմ և իշխանուհու անունից այն սիրո և ուշադրության համար, որ մենք ստացանք սբ. Էջմիածնում, ինչպես նաև գեղեցիկ և օգտակար օրերի համար,- գրել է Վորոնցովը: - Ողջ ժողովուրդը և ողջ երկրամասը տեսնում է, որ Հայկական եկեղեցին այժմ ունի արժանի առաջնորդ և պետք է միայն հասկանալ 10 տարիների ընթացքում Ձեր կրած կորստյան ցավը (ամենայն հավանականությամբ ակնարկում է Պասկևիչի կողմից Ներսեսի կաթողիկոս ընտրվելու հարցում գործած արարքները - Հ.Հ.), քանի որ կարող էիք այնքան օգտակար գործեր կատարել բոլոր առումներով... աստված Ձեզ պահպանի երկարակեցություն և դուք ստանաք արժանի գնահատական՝ տեսնելով Ձեր հաջողություններն ու աստվածահաճո ձեռնարկները» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 400, թերթ 1): Անշուշտ, մեջբերված քաղվածքից կարելի է ենթադրել, որ երկու առաջնորդների բարեկամությունը անկեղծ է եղել. համենայն դեպս նամակում զարգացումները դրան են տանում: Այդուհանդերձ, Կովկասի կառավարչապետի. «խոստովանանքն» իրոք, ուշագրավ է, Ներսես Աշտարակեցու գործունեության արժանի գնահատական, որն առավել քան հարկավոր էր հայոց հայրապետի համար... Նամակում կառավարչապետ Միխայիլ Վորոնցովը հայոց կաթողիկոսից կարևոր ակնկալիք ուներ. հետևենք նամակին. «Ինժեներական սպան անմիջապես գործուղվում է Ձեզ մոտ՝ նոր բնակավայրի պլան մշակելու համար: Ձեզ եմ ուղարկում նաև իմ գրառումների պատճենները առաջնորդվելու համար և անշուշտ, կարող եք այն փոփոխության ենթարկել, ինչը որ անհրաժեշտ կգտնեք, ինչ համար հետաքրքիր և հաճելի է մտածել, որ այն կլինի հարմարավետ և հուսալի արվարձան՝ գրեթե այն նույն վայրում, որտեղ առաջին անգամ

ճակատամարտել ենք Աբաս Միրզայի դեմ... Եթե աստված ինձ առողջություն տա, կհասցնեմ լինել Նախիջևանում և Էջմիածնում: Ես և իշխանուհին միասին խնդրում ենք Ձեր օրհնությունը և անհամբեր կսպասենք Ձեր գալստյանը Թիֆլիս» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 400, թերթ 1-2): Փաստորեն, բնակավայրը ստեղծվելու էր Արևելյան Հայաստանում, թեպետ չի բացառվում, որ բնակավայրի ստեղծման գաղափարը տված լիներ անձամբ Ներսես Աշտարակեցին:

Ներսես Աշտարակեցին բավականին ջերմ հարաբերություններ է ունեցել նաև Միխայիլ Վորոնցովի կնոջ՝ իշխանուհի Ելիզավետա Վորոնցովայի հետ: Վերջինս ևս առանձին նամակով ափսոսանք է հայտնել հայոց կաթողիկոսի օծման արարողությանը մասնակցելու անհնարինության համար, քանի որ «…ամուսինը նոր է վերադարձել երկարատև ու դժվարին ուղևորությունից» և այդուհանդերձ, փորձել է նշանավորել հայոց հայրապետի պաշտոնավարումը. «...թույլ տվեք իմ մաղթանքներով միանալ նրանց, ովքեր դարձան այդ հանդիսության երջանիկ ականատեսը,- գրում է նա... Խնդրում եմ մեր հանդեպ պահպանեք նույն ուշադրությունը, որ ցուցաբերեցիք սուրբ Էջմիածնում և որի համար մշտապես երախտապարտ եմ: Խնդրում եմ շնորհ արեք ամուսնուս՝ Միխայիլ Սեմյոնովիչին սրբազան Ձեր աղոթքով... Խորին հագանքով՝ իշխանուհի Ելիզավետա Վորոնցովա» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 395, թերթ 1): Եվ թեպետ նամակում չի նշվում այդ ուղևորության մանրամասների մասին, սակայն ակնհայտ է, որ խոսքը կրկին լեռնականների դեմ մղվող պատերազմի մասին է: Ի դեպ, Ելիզավետա Վորոնցովայի շնորհավորանքները հայոց նորընծա հայրապետին էր հաղորդել նաև Միխայիլ Վորոնցովը. «Կինս՝ Ելիզավետա Վորոնցովան, հանձնարարել է ինձ Ձեզ հաղորդել անկեղծ բարեմաղթանքներ: Մենք ապագայում՝ Էջմիածնում Ձեզ հետ տեսնվելու հույս ունենք, սակայն հույս ենք փայփայում նաև, որ դուք կկատարեք Ձեր խոստումը՝ երջանկացնել մեզ Թիֆլիս Ձեր ժամանումով: Ես մեկնում եմ ռազմաճակատ և եթե լինեն հետաքրքիր իրադարձություններ, պատիվ կունենամ անմիջապես տեղեկացնել Ձեզ...»,- ասվում էր կառավարչապետի նամակում (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 394, թերթ 1):

Միխայիլ Վորոնցովի կանխատեսումը շուտով իրականություն դարձավ. որոշ ժամանակ անց Կովկասի փոխարքան նամակով հայտնում է Ներսես Աշտարակեցուն՝ իշխան Վասիլ Բեհբութովի գլխավորությամբ լեռնականների դեմ տարած փայլուն հաղթանակի մասին լուրը, շտապելով նկատել նաև, որ իրեն տեղեկացրել են հայոց պատրիարքի Թիֆլիս կատարելիք ուղևորության մասին, որը ժողովրդին «իսկական տոն կպարգևի …Ցավում եմ, որ չկարողացա լինել այն առաջինների թվում, որոնք Ձեզ հաղորդեցին իշխան Վասիլ Բեհբութովի փառավոր հաղթանակի և ընդհանարապես, մեր ռազմարշավի հաջողությունների մասին... Շնորհապարտ եմ Ձեզ մեզ քաջալերելու համար...» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 396, թերթ 1): Իհարկե, որոշ ժամանակ անց, կառավարչապետը ցավով գրում է, որ իրենից անկախ հանգամանքների պատճառով ստիպված է կրկին մեկնել ռազմաճակատ և ափսոսանք է հայտնում, որ «այդ տոնը» չի կայանա. «Այս ամենն ինձ խիստ անհանգստացնում է,- գրում է կառավարչապետը, …երբ Վեհափառը երջանկացնի Թիֆլիսի բնակչությանն իր ներկայությամբ, ես դժբախտաբար այնտեղ չեմ լինի՝ վայելելու և կիսելու նրանց հետ համընդհանուր ուրախությունը...»: Այդուհանդերձ, Կովկասի փոխարքան հույս է հայտնում, որ վերադարձին անմիջապես կտեսակցի հայոց հայրապետին՝ «հեռակա կարգով շնորհապարտ լինելու Ձեզ՝ մեր որդու աղոթքների համար, իշխանուհի Տրուբեցկայայի հետ

ամուսնության առիթով: 18 ապրիլի 1851 թ.» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 408, թերթ 1):

Ինչպես հուշում են նամակների բովանդակությունը, Ներսես Աշտարակեցին սիրով է պատասխանել Կովկասի կառավարչապետի և նրա տիկնոջ նամակներին՝ չմոռանալով տեղեկացնել նաև՝ իր հայանպաստ նախաձեռնությունների ու կատարած գործերի մասին: Հարկ է նշել, որ Կովկասի կառավարչապետն ու կինը իրենց հերթին մշտապես և նույն ջերմությամբ պատասխանել են Ներսես Աշտարակեցու նամակներին, ինչպես օրինակ այս նամակը՝ Ելիզավետա Վորոնցովայի պարագայում. «13 նոյեմբերի 1846 թ. Սրտագին շնորհակալություն եմ հայտնում Ձեր օրհնաբեր նամակի համար և անհամբեր սպասում եմ հայոց պատրիարքի հետ Թիֆլիսում տեսակցելուն» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 397, թերթ 1): Բնականաբար, ինչպես հարիր է պետական գործչին, Ներսես Աշտարակեցին Կովկասի կառավարչապետի հետ նամակագրությունում մշտապես ցանկացել է տեղեկացված լինել կայսրությունում սպասվող և ընթացող գործընթացների մասին և այդ խնդրում մշտապես ապավինել է իր բարեկամ, կառավարչապետ Միխայիլ Վորոնցովի հաղորդած տեղեկություններին: Այս նամակում օրինակ, որը գրվել է Կովկասյան ռազմաճակատից, Ներսես Աշտարակեցուն հաղորդում է բանակի մեջ տարածված մալարիա հիվանդության մասին, որը գլխավոր հրամանատարի խոսքերով՝ ստիպում է միառժամանակ հրաժարվել լայնածավալ ռազմական գործողություններ վարելու մտքից: Մի քանի նախադասություն նամակից; Նամակի վերջում, իհարկե, որպես ռուսական կառավարության ներկայացուցիչ, Միխայիլ Վորոնցովը խնդրում է հայոց հայրապետից՝ «Զոհաբերության մաղթանք-աղոթք բարձրացնել հայոց եկեղեցիներում ի պատիվ ռուսական բանակի հաղթանակների: 15 մարտի 1847 թ.» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 399, թերթ 1): Այդպես էր իրականացվում ռուսական քաղաքականությունը և կառավարչապետ Մ. Վորոնցովն, իհարկե, այդ առումով չի տարբերվել իր նախորդ ու հետնորդ կառավարիչներից: Բնականաբար, Ներսես Աշտարակեցի հայոց կաթողիկոսը կատարել է ռուս բարձրաստիճան պաշտոնյայի խնդրանքի տեսքով պահանջը, թեպետ ինքն էլ իր հերթին խոնարհաբար «խնդրել և պահանջել է» Կովկասի կառավարչապետից՝ նպաստ բերել հայ ժողովրդին վերաբերող այս կամ այն խնդիրքը կայսրության արքունիքում առաջ տանելու համար: Նամակներից մեկում, օրինակ, Ելիզավետա Վորոնցովան հայոց կաթողիկոսին խոստացել էր Հռիփսիմյան անունով իգական մի ուսումնարան բացել Երևանում՝ ակնկալելով Ներսես Աշտարակեցու օրհնությունը աստվածահաճո այդ գործում.«18 դեկտեմբերի 1848թ.: Նախաձեռնել եմ իգական դպրոցի հիմնումը Երևանում՝ աղջիկներին դաստիարակելու համար, ինչպես նաև մշտապես հետևելու նրանց մտավոր և բարոյական զարգացմանը,- գրում էր իշխանուհին: - Ուստի առաջին հերթին դիմում եմ Ձեզ՝ վեհափառ տեր և խնդրում սրբազնագույն օրհնությունը մեր օգտակար գործին: Ձեռնարկելով այս գործը, ես համոզված եմ, գրում է այնուհետև իշխանուհին,- որ մենք լիակատար հաջողություն ենք ունենալու և որ քիչ ժամանակ անց կբացվի ուսումնարան, որը աղքատ ծնողների համար հնարավորություն կստեղծի իրենց դուստրերին կրթության տալու՝ աննշան գումարի դիմաց: Այդ ուսումնարանը կկոչվի Սուրբ Հռիփսիմեի անունով՝ ի հիշատակ Հայաստանի նշանավոր լուսավորչի»,-ասվում էր նամակում (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 407, թերթ 1): Ավելին, ինչպես հաստատում է Ելիզավետա Վորոնցովայի 1851 թ. հունվարի 20-ի նամակը,

իշխանուհին շնորհակալություն է հայտնում Ներսես Աշտարակեցուն՝ վարժարանին 300 ռուբլի նվիրաբերելու համար (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 405, թերթ 1):

Հարկ է նշել, որ Ներսես Աշտարակեցին սիրալիր վերաբերմունք է ցուցաբերել Կովկասի կառավարչապետի և նրա ընտանիքի հանդեպ և այդ վերաբերմունքը փոխադարձ էր. 1833 թ. հունվարի 2-ին իր եղբորորդի Հովակիմին գրած նամակում վերջինիս պատվիրում է «խաղողի վազի տեսականի» պատրաստել՝ Միխայիլ Վորոնցովին նվիրելու համար» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 148, վավերագիր 63, թերթ 1): Իր հերթին, Ելիզավետա Վորոնցովան շնորհակալություն էր հայտնում Ներսես Աշտարակեցուն՝ «համեղ սեխեր ուղարկելու համար», ապա նշում է, որ կառավարչապետը նոր է վերադարձել գործուղումնից և «ուղղակի հիացած է գահաժառանգին սուրբ Էջմիածնում ցույց տված ընդունելության համար և ափսոսում են, որ «այդ ամենի ականատեսը չեն եղել: 11 նոյեմբերի 1850թ.» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 402, թերթ 1): Փաստորեն այնքան մտերմիկ է եղել կառավարչապետի ընտանիքի հետ հարաբերությունները, որ, նամակներից մեկում, օրինակ, Միխայիլ Վորոնցովը հայտնում է իշխան Դավիթ Դադիանիի հետ նամակ ուղարկելու մասին, սակայն վերջինս նախատեսվածից վաղ էր մեկնել Էջմիածին՝ վեհափառին տեսության: Միաժամանակ տեղեկանալով, որ կաթողիկոսը առողջական որոշ խնդիրներ ունի, շտապում է հաղորդել, որ դա իրենց վիշտ է պատճառում, ուստի մաղթում են շուտափույթ ապաքինում. «Իշխան Դադիանին վերադարձել է և մեզ հայտնել է ուրախալի լուր Ձեր առողջանալու մասին, սակայն տեղեկությունը, որ դուք առայժմ չեք կարող հյուրընկալվել մեզ մոտ, մեզ զրկել է իրական երջանկությունից... Խնդրում ենք անհապաղ տեղեկացնել Մեզ Ձեր առողջական վիճակի մասին: Մենք աղոթում ենք Ձեզ համար... 12 դեկտեմբերի 1850 թ.» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 403, թերթ 1): Կամ ասենք, մի նամակում էլ Ելիզավետա Վորոնցովան հայտնում է, որ անձամբ է իր զավակներին հանձնել հայոց կաթողիկոսի ուղարկած նվերները, որից հարսը և որդին հիացմունքի մեջ են (Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 405, թերթ 1): Մեկ այլ նամակում էլ կառավարչապետ Միխայիլ Վորոնցովը գրում է Ներսես Աշտարակեցուն, որ անհամբեր սպասում է նրա հետ Թիֆլիսում տեսակցելու համար, քանի որ «բոլորն արդեն վարժվել են նրա ներկայությանը և իմաստուն մտքերին...» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 404, թերթ 1): Այդուհանդերձ, կառավարչապետը ուրախությամբ տեղեկացնում է Աշտարակեցուն, որ գահաժառանգը իրեն ուղարկած նամակում հիացած է Սուրբ Էջմիածնի բարեկարգությամբ. «Երկար ժամանակ է, ինչ ցանկություն ունեմ Ձեզ նամակ գրել, հիմա արդեն ուրախ եմ ստեղծված հնարավորության համար... սկզբում ցանկանում եմ շնորհապարտ լինել Տիրակալ թագաժառանգի ճանապարհորդության առիթով... ուղղակի երջանիկ կլինեմ Ձեզ տեսակցել Թիֆլիսում: Անշուշտ, Դուք Էջմիածնում կարևոր շատ գործեր ունեք,- գրում է այնուհետև կառավարչապետը,- սակայն այստեղ ևս կան հայկական եկեղեցիներ և ժողովուրդ, որոնք առանց Ձեզ չեն կարող առաջ շարժվել և քանի որ ժամանակին այնքան են կապվել Ձեզ հետ՝ երջանկություն ունենալով տեսնել Ձեզ Թիֆլիսում, որ Ձեր բացակայությունը նրանց համար ցավալի է և ծանր... Տիրակալ թագաժառանգը առանձնակի հիացմունքով էր խոսում Էջմիածնի մասին... ուստի դուք պետք է հպարտ լինեք, որ թագաժառանգը այդպիսի հիացական տպավորություն ունի Էջմիածնի մասին..: 29 դեկտեմբերի 1850թ» (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 404, թերթ 2):

Նամակներից մեկում էլ, Ներսես Աշտարակեցին սիրով ընդունում է 1851 թ. ապրիլին որդու և իշխանուհի Տրուբեցկայայի ամուսնական հանդեսի մասնակցելու փոխարքայի հրավերը, թեպետ այդ կապակցությամբ առանձին շնորհավորանք-ուղերձ է ուղարկում փոխարքային, տիկնոջը և որդուն (ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր 408,409,410):

Եզրակացություն: Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվում պահպանված վավերագրերը թույլ են տալիս բացահայտել և բնութագրել Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու և Կովկասի կառավարչապետ, իշխան Միխայիլ Վորոնցովի և նրա ընտանիքի միջև ստեղծված ջերմ և բարեկամական հարաբերությունները: Ակնհայտ է, որ այդ հարաբերությունների կիզակետում անձնական մտերմիկ կապերից զատ՝ ռուսական իշխանությունների կողմից հայանպաստ որոշումներ ընդունելու հայոց հայրապետի՝ նպատակադրությունն էր, որն, անշուշտ, գնահատելի է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, Ալեքսանդր Երիցյանի արխիվ, թղթապանակ 154, վավերագիր, 391, թերթ.1, վավ. 392, թ.1, վավ. 394, թ.1, վավ. 395, թ.1, վավ. 396, թ.1, վավ. 397, թ.1, վավ. 399, թ.1, վավ. 400, թ.1,2, վավ. 402, թ.1, վավ. 403, թ.1, վավ. 404, թ.1, 2, վավ. 405, թ.1, վավ. 407, թ.1, վավ. 408, թ.1, վավ. 409, թ.1, վավ. 410, թ.1, թղթ. 148, վավ. 63, թ.1:

Гагемайстер А. **(1845),** *Закавказские очерки, СПб.*

References

Gagjemajstjep A. **(1845),** *Zakavkazskije ochjepki, SPb.* **(in Russian)**

Mesrop Mashtots‘i anv. Matenadaran, Alek‘sandr Erits‘yani arkhiv, t‘ght‘apanak 154, vaveragir, 391, t‘ert‘.1, vav. 392, t‘.1, vav. 394, t‘.1, vav. 395, t‘.1, vav. 396, t‘.1, vav. 397, t‘.1, vav. 399, t‘.1, vav. 400, t‘.1,2, vav. 402, t‘.1, vav. 403, t‘.1, vav. 404, t‘.1, 2, vav. 405, t‘.1, vav. 407, t‘.1, vav. 408, t‘.1, vav. 409, t‘.1, vav. 410, t‘.1, t‘ght‘. 148, vav. 63, t‘.1: **(in Armenian)**